«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 546-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 546-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանելու մասին» N 546-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման վերնագրում «ավտոմատ» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով.
- Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 158-րդ հոդվածի 8-րդ մասը» բառերը փոխարինել «օրենքի 78-րդ հոդվածի 8-րդ մասը» բառերով.
- Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «ավտոմատ» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով, իսկ «այսուհետ՝» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) ներդրված» բառերը.
- Որոշմամբ սահմանված N1 հավելվածի՝

ա. 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am)»

բառերը փոխարինել «ՄՄԱՏՀ-ում» բառով.

բ. 5-րդ կետում «մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՄՄԱՏՀ)» բառերը փոխարինել «ՄՄԱՏՀ-ի» բառով.

գ. 8-րդ կետում «տեղեկությունները» բառից հետո լրացնել «հաստատող փաստաթղթերը» բառերը, իսկ «՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված» բառերը հանել.

ե. 11-րդ կետի 3-րդ ենթակետում «236-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի» բառերը փոխարինել «236-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով» բառերով.

զ. 12-րդ կետից հանել «՝ էլեկտրոնային ձևաչափով» բառերը.

է. 12.2-րդ կետում «փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները որպես էլեկտրոնային փաստաթուղթ էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված» բառերը փոխարինել «փաստաթղթերը՝ որպես էլեկտրոնային փասաթուղթ» բառերով, իսկ «լուսապատճենված» բառից հետո լրացնել «էլեկտրոնային» բառը.

ը. 13-րդ կետում «կետով» բառը փոխարինել «կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով» բառերով.

թ. 29-րդ կետում «մաքսային մարմին ներկայացնելու դեպքում կիրառվում է» բառերը փոխարինել «մաքսային մարմին է ներկայացվում» բառերով.

ժ. 30-րդ կետում «մաքսային մարմին ներկայացվելու դեպքում կիրառվում է» բառերը փոխարինել «մաքսային մարմին է ներկայացվում» բառերով.

- Որոշմամբ սահմանված N2 հավելվածի՝

ա. 1-ին կետում «անձանց» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ Դիմումատու)» բառերը, իսկ «մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ՄՄԱՏՀ)» բառերը փոխարինել «ՄՄԱՏՀ» բառով.

բ. 2-րդ կետում «ՄՄԱՏՀ մուտք գործելու իրավունք ձեռք բերելու ցանկություն ունեցող անձը (այսուհետ՝ դիմումատու)» բառերը փոխարինել «Դիմումատուն» բառով.

գ. օրինակելի ձևից հանել «կառավարությանն առընթեր» բառերը, նույն ձևի 3-րդ կետում «ԵԱՏՄ» բառը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով, իսկ 5-րդ կետում՝ «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ